



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 հունվարի 2015թ.

N 35 -Ն

ք.Ստեփանակերտ

ՄԻԱԺԱՄԱՆԱԿ ՄԵԿԻՑ ԱՎԵԼԻ ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ ՎԵՐԱՀԱՇՎԱՐԿ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼԻՄ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել, որ

1) միաժամանակ մեկից ավելի քվեարկությունների դեպքում միայն մեկ քվեարկության արդյունքների վերահաշվարկ իրականացնելիս տարածքային ընտրական հանձնաժողովը բացում է այդ քվեարկության ընտրական փաստաթղթերի ընդհանուր փաթեթը.

2) վերահաշվարկ իրականացնելու համար ընտրական փաստաթղթերի բացված ընդհանուր փաթեթից ընտրողների ցուցակների փաթեթի բացակայության դեպքում տարածքային ընտրական հանձնաժողովը բացում է նաև այն քվեարկության ընտրական փաստաթղթերի ընդհանուր փաթեթը, որտեղ պետք է տեղադրված լինեին ընտրողների ցուցակների փաթեթը.

3) ընտրողների ցուցակների փաթեթը՝ ընտրական փաստաթղթերի համապատասխան ընդհանուր փաթեթից հանելուց հետո, տարածքային ընտրական հանձնաժողովը փակում և կնքում է ընտրական փաստաթղթերի այդ փաթեթը, փակման մասում ստորագրում են տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահը, ինչպես նաև նախագահի տեղակալը կամ հանձնաժողովի քարտուղարը, իսկ եթե նրանք ընդգրկված չեն վերահաշվարկ իրականացնողների կազմում, ապա տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի նշանակած անդամը, իսկ ցանկության դեպքում՝ հանձնաժողովի մյուս անդամները, վստահված անձինք, ինչի վերաբերյալ գրառում է կատարվում տարածքային ընտրական հանձնաժողովի նիստերի արձանագրությունների և որոշումների գրանցամատյանում.

4) վերահաշվարկն ավարտելուց հետո տարածքային ընտրական հանձնաժողովն ընտրողների ցուցակների փաթեթը տեղավորում է վերահաշվարկ կատարված ընտրական տեղամասի ընտրական փաստաթղթերի համար նախատեսված ընդհանուր փաթեթում, փակում և կնքում է փաթեթը, փակման մասում ստորագրում են տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահը, ինչպես նաև նախագահի տեղակալը կամ հանձնաժողովի քարտուղարը, իսկ եթե նրանք ընդգրկված չեն վերահաշվարկ իրականացնողների կազմում, ապա տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի նշանակած անդամը, իսկ ցանկության դեպքում՝ հանձնաժողովի մյուս անդամները, վստահված անձինք, ինչի վերաբերյալ գրառում է կատարվում տարածքային ընտրական հանձնաժողովի նիստերի արձանագրությունների և որոշումների գրանցամատյանում:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ**

Ս.ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ